ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2024 թվականի N 1077-Ա

## ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2020թ-ի դեկտեմբերի 3-ի № 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել 2024 թվականի մայիսի 24-ին կայացած Արարատ համայնքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցույթային հանձնաժողովի 2024թ.-ի մայիսի 30-ի թիվ 4 արձանագրությունը:

2.Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցույթի հաղթող ճանաչված «Տիգհար» ՍՊ ընկերությանը տրամադրել ք.Արարատ-ՈԿՖ բանավան երթուղին սպասարկելու իրավունք՝ 10 տարի ժամկետով:

3. «Տիգհար» ՍՊ ընկերության հետ կնքել պայմանագիր՝ հայտ-պարտավորությամբ ներկայացված միկրոավտոբուսները ձեռք բերելու ժամանակացույցի վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

31 մայիսի 2024 թ.
ք. Արարատ

Հաստատում եմ՝

Արարատ համայնքի ղեկավար
Ասլան Ավետիսյան

# ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

**ք.Արարատ**

**30. 05.2024 թ.**

Արարատ համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 8-ի N 672-Ա որոշմամբ ստեղծված հաձնաժողովի նիստ.

**Մասնակցում էին՝**

նախագահ՝ Արմեն Բաղդասարյան
անդամներ՝ Կարեն Մելքոնյան
Մեխակ Աբրահամյան
Քարտուղար՝ Նունե Կարապետյան
Նիստն իրավազոր է:

**Օրակարգում՝**

2024 թվականի մայիսի 24-ին կայացած Արարատ համայնքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցույթի արդյունքների անփոփումը:

**Որոշվեց՝**

Հաշվի առնելով, որ 2024 թվականի մայիսի 24-ին կայացած Արարատ համայնքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցույթի արդյունքում «Տիգհար» ՍՊ ընկերությունը հավաքել է 55 միավոր համաձայն ՀՀ կառավարության 2020թ-ի դեկտեմբերի 3-ի №1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետի

1. «Տիգհար» ՍՊ ընկերությանը ճանաչել հաղթող մասնակից հետևյալ տրանսպորտային միջոցներով՝ 3 հատ 2024թ-ի արտադրության ГАЗель NEXT-A65R33 մակնիշի միկրոավտոբուսներով N1 ք.Արարատ-ՈԿՖ բանավան երթուղու սպասարկում

2. Հաստատել «Տիգհար» ՍՊ ընկերության կողմից ք.Արարատ-ՈԿՖ բանավան երթուղու մեկ ուղևորի համար առաջարկված 250 դրամ փոխադրավարձը:

3. Հաստատել, որ «Տիգհար» ՍՊ ընկերությունը Ձև N12-ում նշված հաշվեհամարին է փոխանցել հայտ-պարտավորությամբ մրցույթին ներկայացրած միկրոավտոբուսների ընդհանուր արժեքի 2.5 տոկոսին համարժեք 982.500 /ինը հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ գումարը:

4. Սույն արձանագրությունը ներկայացնել Արարատ համայնքի ղեկավարի հաստատմանը:

նախագահ՝ Արմեն Բաղդասարյան

անդամներ՝ Կարեն Մելքոնյան

Մեխակ Աբրահամյան

քարտուղար՝ Նունե Կարապետյան

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայտ-պարտավորությամբ ներկայացված ավտոբուսները ներկայացնելու
ժամանակացույցի մասին

Ք.Արարատ 03/06/2024թ.

«Արարատի համայնքապետարանը», որպես Արարատ համայնքում ուղևորների կանոնավոր փոխադրումներիրի երթուղային ցանցը կազմակերպող մարմին (այսուհետ՝ Լիազոր մարմին), ի դեմս համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանի, մի կողմից, և ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ ընտրելու մրցութայթում հաղթող ճանաչված «Տիգհար» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Փոխադրող), մյուս կողմից, ի դեմս տնօրեն Գարիկ Մանուկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 03-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի և Արարատ համայնքի ղեկավարի 31-ը մայիսի 2024թ-ի N 1077-Ա որոշման համաձայն, կնքեցին սույն պայմանագիր-ժամանակացույցը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Փոխադրողը պարտավորվում է պայմանագրով սահմանված ժամանակահատվածում Լիազոր մարմնին ներկայացնել իր հայտ-պարտավորությամբ ներկայացված ավտոբուսները:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Լիազոր մարմինը պարտավոր է.

Փոխադրողի կողմից սույն պայմանագրի 2.2 կետի պահանջները չկատարելու դեպքում Փոխադրողին զրկել երթուղին սպասարկելու իրավունքից:

2.2 Փոխադրողը պարտավոր է.

Մինչև 2024թ-ի դեկտեմբերի 3-ը Լիազոր մարմնի մրցույթային հանձնաժողովին ներկայացնել իր հայտ-պարտավորությամբ ներկայացված ավտոբուսները հետևյալ քանակով.

| NN ը/կ | Մակնիշ | Թողարկման տարեթիվ | Քանակ | Ներկայացման վերջնաժամկետը |
|---|---|---|---|---|
| 1. | ГАЗель NEXT-A65R33 | 2024թ | 3 | 03/12/2024թ |

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Կողմերն իրենց իրավասության սահմաններում Օրենքի, Որոշման և Պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Անհաղթահարելի ուժի հանգամանքների առաջացման դեպքում Կողմերի պարտավորությունների կատարման ժամկետները հետաձգվում են այդ հանգամանքների և դրանց հետևանքների գործողության ժամանակին համաչափ: Կողմը, որի համար վերոհիշյալ պատճառներով Պայմանագրով պարտավորությունների կատարումն անհնարին է դարձել, պարտավոր է գրավոր տեղեկացնել մյուս Կողմին տվյալ հանգամանքների առաջացման կամ վերանալու մասին 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Եթե անհաղթահարելի ուժի գործողությունը շարունակվում է 2 /երկու/ ամսվա ընթացքում, ապա Կողմերը պետք է քննարկեն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների հետագա կատարման հնարավորության կամ Պայմանագրի լուծման հարցը, այդ մասին Պայմանագրում կատարելով համապատասխան փոփոխություն կամ լրացում:

## 5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

5.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ

6.1 Պայմանգրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է /բացառությամբ կողմի գտնվելու վայրի հասցեի/, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Պայմանգրում Կողմի գտնվելու հասցեի փոփոխությունը համարվում է կատարված այդ մասին մյուս Կողմին պատշաճ ձևով ծանուցելու պահից:

6.2 Պայմանագիրը կազմված է հավասարազոր 2 /երկու/ օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 3-ը:

## 8.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8.1 Սույն պայմանագիրը կարող է լուծվել.

1/ Փոխադրողի կողմից սույն պայմանագրի պայմանների չկատարման դեպքում

2/ պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում

3/ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Լիազոր մարմին** | **Փոխադրող** |
|---|---|
| Արարատի համայնքապետարան<br>ք. Արարատ, Շահումյան 34<br>Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան | «Տիգհար» ՍՊԸ<br>Արարատի մարզ, գ.Ավշար<br>Տնօրեն՝ Գ.Մանուկյան |
| /ստորագրություն/Կ.Տ | /ստորագրություն/<br>Կ.Տ |